

ինքիրմէն դուրս ելեր էր : Այլ թանք զինքը սիրելու ու գգուելու , և անտարակոյս ինքզինքը դեռ Ալգրավէր պիտի կարծէ : Այլ ինչ զուարճութիւն պիտի ըլլայ մեզի՝ բոլոր շաբաթը աղէկ մը աշխատելէն վերջը , կիրակի և տօն օրերը իրենքս մէկտեղ հասարակաց պարտէզներն երթալ պտըտիլ : Ո՛հ , պարոն Ալարիտիոս , շատ երջանիկ եմ ես . ուրախութենէս կը խղզուիմ , պէտք է որ դուրս գեղում զայն , :

Աւրեմն վերջապէս այն ժամը զարկեր էր , զոր Ալարիտիոս կարծէր թէ ամենեւին պիտի չհասնի : Ինքը յոյս ունէր որ անկարծելի խափանմունքներ , անյաղթելի անգեղեքներ դուրս կ'ելեն , և ընդ հակառակն կարծես թէ դիւթութեամբ ամէն բան յաջող գացած էր : Եւ այն իսկ վերջին իրիկունը միտքը դրած էր որ անշուշտ արտաքոյ կարգի դիպում մը կը հանդիպի , որ զինքը այս ծանր կապանքէն կ'ազատէ , և սակայն իրական հարկը հասեր էր երկրթէ ձեռքով և առանց ճամբան խոտորելու : Այլ ժամանակը չէր ետ քաշուելու : Այն սեմէն դուրս ելլալու ատենը՝ ուսկից մէյ մ' ալ ներս պիտի չմտնէր , այն առարկաներէն բաժնուելու միջոցը՝ որոնց մէջ սահէր էր իր խռովայոյզ երիտասարդութիւնը , Ալարիտիոս սրբտէն տխուր ողբեր ու բանաստեղծական հրաժեշտի ողջոյններ արձրկելու մարդ չէր : Արիշ կողմանէ , թէպէտ այն տեղերն՝ ուր կրած է մարդ՝ չկրնար առանց խանդաղատանաց թողուլ , սակայն այն տեղերն՝ ուր գէշ կեանք անցուցած է՝ հայրենիք չեն կրնար ըլլալ , և միշտ առանց գորովոյ և առանց ցաւելու կը թողու զանոնք : Այն ամէն բաներն՝ որոնց վրայ իշխանութիւն ունէր՝ Արսուլային տուաւ որ կառքին մէջ դնէ . և տխուր ու չոր աչքերով չորս դին մէյ մը նայելէն ետքը , թէին տակն առաւ ատրճանակներուն տուփն , որ իրեն բոլոր հարստութիւնն ու վերջին յոյսն էին , ու թափով մը բնակարանէն դուրս ելաւ : Այս վայրկենիս՝ Ազգադինէի ճակտին վրայ այն եր-

կնային ուրախութեանը ճառագայթ մը կը ցոլար , որ անտարակոյս կը լուսաւորէ հրեշտակաց դէմքը , երբոր ի ձայն երգոց մոլորեալ հոգի մը կը տանին առ Բստուած :

ՀՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Սիրիւայք :

Հեթանոսաց գուշակութիւններուն մէջ բաւական վէճերու նիւթ երէն մէկն ալ եղած է Սիրիւայից ինդիլը : Ամանք տեսնելով որ ասոնց գրքերուն մէջ Արքարէութեանց հաւասար՝ թերեւ աւելի ալ յայտնի գուշակութեան Վրիստոսի տնօրէնութիւններն ու վերջին դատաստանը , տարակուսեցան թէ քրիստոնեայք հեթանոսները աւելի դիւրաւ համոզելու համար աս կտորները աւելցուցեր են , կամ թէ ինքնին Սիրիւաները Արքոյ խօսքերէն հաներ ու գրեր են : Սենք հոս համառօտ մը Սիրիւայից պատմութիւնն ընելէն վերջը , անցնինք ցուցնելու ինչ որ աւելի հաւանականագոյն կ'երևայ աս ինդրոյս վրայօք Արքոյ և հեթանոս մատենագրաց գրուածքներէն :

Սիրիւա կամ Սիպիւլա անունը Յունարենի մէջ՝ « Բստուածախոհ կամ աստուածիմաստ » կը ստուգաբանուի : Յոյները աս անունը կու տային ան ամէն կուսանաց՝ որոնք առանձին քաշուած կենալով ու զանազան գիտութիւններու վարժելով , ինչուան գոնէ արտաքուստ մարգարէական ոգի մը կը ստանային կամ նաեւ ճշմարտութեամբ ալ ապագայ ըլլալիքները կը գուշակէին :

Այնչափ բազմաթիւ Սիրիւայից մէջէն որ Յոյները իրենց հեթանոսութեանը միջոց ալ և ալ տեղեաց ու ազգերու մէջ կը սեպէին թէ ըլլան , հիմա հազիւ թէ քանի մը Սիրիւա կը յիշատակուին յանուանէ գրոց մէջ , Վրիստոսէ շատ դարերով առաջ , որոնց որոշ ժամանակը չգիտցուիր : Այլ-

սեբիոս ասոնցմէ աւելի երևելին՝ Սի-
բիլա Լըրիթընացի, Լըրիթեան կամ
Լըրետեան կոչուածը՝ իր Քրիստոսին
մէջ Լքազու և Լգեկիայի, Յուդայի
ցեղին թագաւորաց ժամանակները կը
դնէ. ինչպէս նաև Լըրիթիա Սամո-
սացին ալ, որուն ոմանք Սամեցի ալ
կ'ըսեն, Սանասէ թագաւորին վերջի
տարիները: Իսկ Սարրոն առանց ժա-
մանակնին որոշելու տասը Սիբիլա կը
համրէ, որ ասոնք են.

Պարսկայինը

Իբրիականը

Ղալիփեանը

Կուժականը (Խալ.)

Լըրետեանը

Կուժականը (Լաու.)

Սամեցին

Լըլեսպոնտականը

Փոխգացին

Տիբուրականը:

Լսոնք ամէնքն ալ առանձին բանաստեղ-
ծական, վիպասանական, գուշակու-
թեան վերաբերեալ, խրատական և ի-
մաստասիրական գրուածքներ ունէին,
և ինչուան հիմա ալ կը գտնուի իրենց
կցկտուր մնացած գործոց հաւաքումը,
որոնք տպուած ալ են յունարէն ու լա-
տիներէն, բայց ընդհանուր անուամբ,
վասն զի գրեթէ անկարելի եղած է իւ-
րաքանչիւր անուան համեմատ ամէն
մէկուն գրուածքը որոշել:

Լէլոս Ղալիփոս կը պատմէ թէ ան-
ծանօթ պառաւ մը, որ կ'ըսուի թէ
Լըրետեան կամ Կուժական Սիբիլան
եղած ըլլայ, ինն գիրք բերեր է Տար-
կունիոսի և իրեքհարիւր դահեկանի
գին պահանջելով ուզեր է ծախել. երբ
որ թագաւորը գնոյն բարձրութեանը
համար չէ գնած, Սիբիլան թագաւո-
րին առջև իննին մէջէն իրեքը այրեր
ու մնացածին համար դարձեալ նոյն գի-
նը պահանջեր է. վերջը նորէն տեսնա-
լով որ թագաւորը զինքը ծաղը ըրաւ,
իրեք մըն ալ այրեր անոնցմէ և իրեքին
համար ալ նոյն առջի գինը ուզեր է:
Թագաւորը Սիբիլային ըրածին վրայ
զարմացած՝ նոյն գնով առեր է գրքերը,

հրամայելով որ պատուով Կապիտոլին
կ'առայ տապանի մը մէջ պահուին:
Սիբիլան, կ'ըսէ Ղալիփոս, ասոնց հա-
մար մասնաւոր գիտուն անձինք ալ որո-
շեց քուրմերէն, որպէս զի թէ որ Սի-
բիլեան գրքերուն մէջ տարակոյս մը
եղէ՝ թարգմանեն ու մեկնեն, և թէ որ
հարկ ըլլայ՝ իրենք միայն կարող ըլլան
աս գիրքերս ուրիշներուն ցուցնել, և
գիպուածոց համեմատ, իբրև պատգա-
մախօսք աս գրքերուս, պատմեն անոնց
մէջի եղած գուշակութիւնները:

Լսյա գրքերս այսպէս անարատ մնա-
ցին ինչուան Սնորիոսի և Լըկադիոսի
Սեծին Թէոգոսի որդւոց թագաւո-
րութիւնը. բայց ան միջոցները Ստե-
րիկոն բռնաւորը զասոնք այրեց, որուն
համար կ'ըսէ Հուսեփոս. «Ոչ հայ-
րենեայն միայն եկաց անագորոյն ծա-
խիչ զինուք մատնին, այլ և զսուրբ
գուշակութիւնս Սիբիլայից մատնեաց
ի հուր»:

Ուրիշներն ալ կը պատմեն թէ Սիլ-
լայի օրերը, Վրիստոսէ 100 կամ 150
տարիի չափ առաջ, երբոր Կապիտոլին
բռնկեցաւ, Սիբիլայից գրքերն ալ հոն
այրեցան: Բայց Տակիտոս իր Տարե-
գրութեանց մէջ կը գրէ (2. 12.)
թէ ծերակոյտը շատ մը անձինք խաւ-
րեց Սամոս, Լիւն, Լըրետոն, Լփրի-
կէ, Սիկիլիա և Խալիկոյ կողմերը, որ-
պէս զի աս գրքերուս օրինականները գրա-
նան. իսկ () գոստոս կայսրն ալ յանձ-
նեց որ անոնց մէջէն ստոյգները զա-
տուին: Սուետոնիոս ալ () գոստոս կայ-
սեր վարքին մէջ կ'ըսէ թէ որչափ որ
յունարէն ու լատիներէն անանուն
հեղինակներու ըզճապատում գիրքեր
կային ժողովրդեան մէջ՝ իրեք հարիւ-
րէն աւելի, () գոստոս բոլորն ալ այրել
տուաւ, բայց միայն Սիբիլայից գրքերը
պահեց և անոնցմէ ալ ընտրելագոյննե-
րը զատեց ու Լյուդոնի մեհէնին խարս-
խին տակ երկու ոսկեզօծ խորշերու
մէջ պահեց խնամքով:

Իսկ Սիպիսկոս ալ կը գրէ թէ Լը-
րեթեանոսի կայսրութեան ժամանակ
երբոր Սարկոմանք Վաղղիա և Խաւ-

լիա կ'ասպատակէին, կարգէ դուրս խու-
շուծիւն մը ելլելով Հռովմ, Սիբի-
լայից գրքերուն դիմեցին, որոնք իբրեւ
բարերարք հասարակաց ծանուցուած
էին: Եւսոնցմէ յայտնի կ'իմացուի ու-
րեմն մէկ կողմանէ թէ ինչ մեծ զգու-
շութեամբ կը պահէին Հռովմայեցիք
Սիբիլայից գրքերը, և մէկալ կողմանէ՝
որ թէպէտ շատ դէպքերով պակսե-
ցան, բայց բոլորովին չկորսուեցան, ո-
րով կրցան ինչուան քրիստոնէից ձեռքն
ալ հասնիլ:

Թող որ նաև Սարրոն, Սիրգիլոս,
Կիկերոն, Պլինիոս և ուրիշներն ալ
կարդացեր էին Սիբիլայից գրքերը, և
շատ բան ալ առած են անոնցմէ, ինչ-
պէս վերջը պիտի տեսնանք: Սիբիլ-
լայից գրքերէն յառաջ կը բերէ նաև
Բլեքսանդր Բազմավէպն աշտարակին
պատմութիւնը. «Սիբիլիդաս ասէ. «
Սիբիլան եւլ ամենայն մարդիկ զբար-
ձրաբերձ աշտարակն շինէին», և այլն:
Ինչպէս նաև հնութեանց քաջ խու-
զարկու մեր երանաշնորհ Խորենացին
ալ այսպէս կը գրէ. «Բայց ես այժմ
ուրախացայց հաւ առնելով առաջի-
կայիցս իմոց բանից 'ի սիրելոյն իմմէ և
քան զշատս յարդարախօսողէ, 'ի բիւ-
ռոսեանն Սիբիլիդէայ: Հառաջ քան
զբուրգն, ասէ, և զբազմաբարբառն
լինելոյ ձայնի ազգի մարդկան, և զկնի
նաւարկութեանն Վսիսութեայ 'ի
Հայս, Օրուանն և Տիտանն և Հա-
պետոսթէ լինէին իշխանք երկրի»: Եւ
ահաւասիկ այսօրուան օրս Սիբիլ-
լայից տարագրուած գրուածոցը մէջ ա-
մենաճիշդ կը տեսնենք Խորենացիին
պատմածը, անանկ որ մէկ օրինակէն
միւս օրինակը կրնայ սրբագրուիլ, վասն
զի ան որ Խորենացին իբրև մէկ անուն
մը կարդացեր է Յապետոսթէ՝ հիմա կը
կարդացուի Յապետոսթէ այսինքն Յա-
պետոս ևս: Ինչպէս նոյն վկայութիւնը
կը յիշէ Բլեքսանդրոս ալ և կը կար-
դայ «Եւ թագաւորեաց Սոսոս (որ
և Օրուանն) և Տիտան, Հապետոս
ևս»:

Բայց հիմա բուն ինդրոյն գալով

նայինք թէ ինչ վկայութիւններ կը բե-
րեն Ս. Հարք Սիբիլաներէն և ընդ-
հանրապէս ինչ հաստատութիւն կու
տան անոնց:

Եւսոնց Յուստինոս վկան ցուցնելով
Հուսոնց թէ ինչպէս ուղիղ աստուած-
պաշտութիւնը կրնան հին Սիբիլանե-
րէն սովորիլ, որ «Սուուցանէ զձեզ,
կ'ըսէ, պատգամօք վերաշնչմամբ իմն
հզօրիւ որոց երևի մերձաւոր մարգա-
րէիցն լինել վարդապետութեան»,
վերջը նոյն Սիբիլային վրայ խօսելով՝
ուսկից որ կ'ուզէր զՀոյները համոզել
'ի քրիստոնէութիւն' կը պատմէ թէ ա-
նոր ծագումը Բաբելոնէն կը կարծուի,
և Բերոսոսի, Վաղգէացոց պատ-
մութիւնը գրողի մը աղջիկն էր, և ո՞
գիտէ կ'ըսէ ինչպէս Վամպանիոյ կող-
մերը երթալով Սուսա քաղքին մէջ
սկսեր է պատգամներ տալ: Եւ նոյն-
պէս անոր պատգամատեղին ստորագրե-
լով՝ զօրն որ ինքն ալ տեսեր էր, կ'ը-
սէ թէ «Սեծ մատուռ մըն էր, մէկ
կտոր քարէ փորուած. ինծի պատմե-
ցին ան տեղի եղողները իբրև հայրենա-
կան աւանդ մը թէ հոն կու տայ ե-
ղեր Սիբիլան իրեն պատգամները:
Սատրան մէջտեղը իրեք աւազան ալ
կար նոյն քարին մէջ փորուած, որոնք
երբոր ջրով կը լեցուէին՝ Սիբիլան
կը լուացուէր և վերջէն ներքին սե-
նեակը քաշուելով՝ բեմի կամ աթոռի
մը վրայ նստած իր պատգամները կը
խօսէր: Եւ Սիբիլան, կ'աւելցնէ,
իբրև պատգամախօս ուրիշ շատերն
ալ յիշատակեցին, ինչպէս նաև Պլա-
տոն ալ իր Փէդրայի մէջ, որուն պատ-
գամներուն հանդիպելով և տեսնելով
որ շատոնցունէ առաջ ըսածները կը
ճշմարտին, զինքը աստուածացուցանե-
լով կը գրէ թէ «Ճշմարտապէս ուրեմն
աստուածային կ'ըսենք անոնց որոնց որ
պատգամախօս անունը կու տանք, և
ընդունայն տեղը չենք ըսեր աստուա-
ծային և վերացեալ վերին շնչմամբ և
վարժեալ յաստուծոյ, երբոր կը տես-
նանք որ իրապէս մեծամեծ բաներ կը
խօսին, առանց գիտնալու ետքը թէ

ինչ խօսեցան , : Ս երջը ինքն իսկ Յուս-
տինոս Պղատոնի ըսածը յաւանդուած է-
նէ ալ հաստատելով թէ Սիբիլաները
բոլորովին իրենց խօսածը կը մոռնային՝
կը դառնայ Յունաց ու “Սիտ գիբ ,
կ'ըսէ , անկուռասէր մտօք , առ 'ի նմանէ
('ի Սիբիլայէ) ասացելոյն և ծանե-
րուք եթէ որքան բարեաց պատճառ
ձեզ լիցի պարզապէս և յայտնաբարբառ
զփրկչին մերոյ Յիսուսի Վրիստոսի
զգալուստն նախաձայնելով , և քիչ
մը ետքը նորէն . “ Հաւատացէք հնա-
գոյն և վաղեմի յոյժ Սիբիլայիդ , որոյ
մատենանք ընդ ամենայն տիեզերս պա-
հալք գտանին , որ յաղագս անուա-
նեալ աստուածոց՝ զի չգոն , 'ի հզօր իմն
վերաշնչմանէ պատգամօք զմեզ ուսու-
ցանէ , և յաղագս հանդերձեալ գալըս-
տեան փրկչին մերոյ Յիսուսի Վրիս-
տոսի , և այլն : Որոյ մատենի ընդ ա-
մենայն րիւսէրս պահեալք գտանին ըսելէն
կ'իմանանք որ ամենեւին խանգարուած
չեն աս գիրքերը . թէ չէ , ինչպէս ու-
րեմն կը համարձակէր Յուստինոս հե-
թանոսները խաւրել որ նոյն գրքերուն
մէջ նային , վկայելով թէ աշխարհիս
չորս կողմը տարածուած են : Ուրիշ
տեղ մըն ալ կը գրէ դարձեալ ինքը՝ թէ
Հիստասպէայ ու Սիբիլայից գրքերը
կարդացողներուն մահ սահմանեցին
Հռոմայեցիք դիւաց խորհրդովը , վախ-
ցընելով զիրենք որպէս զի չկարդան ան
գիրքերը և մէջի եղած գուշակութիւն-
ները չիմանան :

Երբնպէս նաև առջի դարերու մա-
տենագիրներէն Սիստինոս Մատիոքա-
ցին ալ խօսելով թէ ինչպէս շատ մար-
դարէներ եղած են Երբայեցւոց մէջ ,
հեթանոսաց մէջ ալ , կ'ըսէ , Սիբիլա
անունով կ'ին մարգարէ եղած է որ իր
մարգարէութեանց սկիզբը մէկէն կը
յանդիմանէ զմարդիկ :

Բայց նայինք թէ ինչ կը պատասխա-
նէ Որոգինէս Վելսոսի ըրած խնդրոյն
դէմ . “ Չեմ գիտեր , կ'ըսէ , ինչպէս
կ'ուզէ Վելսոս որ մենք Սիբիլայից՝ և
ու թէ Յիսուսի ընծայենք Որդի Մ-
տուծոյ անունը , պատճառ բերելով թէ

շատ նոր ու հայհոյական բաներ աւել-
ցուցեր ենք անոնց գրուածքին մէջ .
բայց ուր է , թող նշանակէ մեզի ան
հնագոյն ու մաքուր ձեռագիրները , ո-
րոնց մէջ չկան ինչ որ կը սեպէ որ մենք
աւելցուցած ըլլանք , ուր և ոչ իսկ կը
ցուցնէ թէ ինչ են հայհոյութիւն ը-
սածները , :

Եւկէց դուրս , Կղեմէս Լըքսան-
դրացին ալ “ Լըք և զհեղինական
մատենան , կը գոչէ հեթանոսաց , 'ի
միտ առէք զՍիբիլայն , որպէս յայտնի
կացուցանէ զմի Մտուած և զորս հան-
դերձեալ էին լինել . և զհիստասպէն
առեալ ընթերցարուք և գտջիք բազմօք
յստակագոյն և յայտնագոյն գրեալ զոր-
դին Մտուծոյ , և թէ զիարդ ճակատ
յարդարեացեն ընդդէմ Վրիստոսի բա-
զում թագաւորք , : Ինչպէս ոչինչ ընդ-
հատ Սեծն Կոստանդիանոս աստուա-
ծասէր կայսրն ալ , որ շատ հմուտ էր
աստուածային ու արտաքին ուսմանց և
տեղեակ հեթանոսական հնութեանց ,
Վրիստոսի գալուստը մարգարէներէն
ցուցընէն ետև կ'աւելցընէ՝ թէ “ Լըլ
կայ ինձ առաջի և զայլ ուստեք ինչ յի-
շատակել 'ի վկայութիւն աստուածու-
թեանն Վրիստոսի , քանզի անշուշտ
'ի սոցունց և հայհոյաց նորա միտք ծա-
նիցեն զնա Մտուած գոյ , Մտուծոյ
որդի , եթէ արդարև իւրեանց բանիցն
հաւատասցեն : Լըդ Սիբիլայն Լըրի-
թրէա՝ որ ասէ զանձնէ 'ի վեցերորդ
ազգին լինել զինի ջրհեղեղին , քրմու-
հի էր Մտուծոյն ունելով պսակ հան-
գոյն պաշտեցելոյն 'ի նմանէ Մտուծոյ
և զեռոտանին զորով օձ էր պատեալ
պահէր , և տայր պատգամն որոց հար-
ցանէինն զնա . . . : Լըդ սա երբեմն 'ի
դաբիրն ապաժամ պաշտաման վարեալ
և աստուածային վերաշնչմամբ տիրա-
պէս լցեալ տաղիւք յաղագս Մտուծոյ
զհանդերձեալս նախագուշակեաց , որու
շակի նախագասութեամբ առաջին տա-
ռից որք ստիքածայրք ասին , արտայայ-
տեալ զպատմութիւն իջմանն Յիսու-
սի , : — Ստիքածայր կ'ըսուի երբոր
ոտանաւոր գրուածքի մը առջի գիրքը

անուն մը կամ իմաստ մը կը կապեն ,
ինչպէս հոս Սիբիլայից պատգամներ
ըուն մէջ Իսիսու Խրիստոս Թէոս Իէօս ,
սօդիոս , սրաւոս կը կապուի , այսինքն

է “ Յիսուս Վրիստոս Լստուծոյ որդի
փրկիչ խաչ , Իսկ Կոստանդիանոսի
յիշած պատգամն ալ ահաւասիկ աս է .

Պատաստանին նըշանակ զերկիր ի քիրտն համակեսցէ :
Յերկնից գայցէ Թագաւոր կալ հանդերձեալ յաւիտեան :
Յանդիման մարմնով առ ի դատել եղեալ զաշխարհ :
Որով զԼստուած տեսանիցեն հաւատացեալն եւ անհաւան :
Օ Բարձրեալն հանդերձ սրբովք անդ ի դարուց կատարածի :
Յորժամ աշխարհ ապալեր Թողցի ի խիտ ի մացառս :
Պանծս ամենայն եւ ըզկուռս լըքեալ Թողցեն մահկանացուք :
Հուր ըզծով և զերկինքս լափեսցէ հանդերձ երկրաւ :
Ըզըժօխոց խաւարին դրունս հետազօտեալ խորտակեսցէ :
Ի սրբոցն մարմնիւս լոյս տացի բացարձակ :
Լսլ սակայն բոց ծախիչ անօրինաց անկիզելի :
Ի յայտնէն ըզգաղտնի գործս , այր այր զծածուկսն անդ խօսեսցի :
Իս ի լոյս Լստուած ըզսիրտս հանցէ բոլորեցուն :
Ի իցի ողբումն ամենեցուն եւ ատամանց յայնժամ կըրճել :
Կապտեսցի արփւոյն նշոյլ եւ աստեղաց պարք վատնեսցին :
Պալարեսցի երկին , ծագումն լուսնոյ նըւաղեսցի :
Յածուցէ ըզբըլուրս ամբառնալով զձորս ի խորուստ :
Ոչ եւրս բարձր եւ խոնարհ ի մարդկայինս այլ լինիցին :
Ի երկնք դաշտաց հաւասարեալք , ծովուն համայն դադարեսցին
Ըլք կապոյտ , եւ գետին պատառոտեալ կորիցէ :
Ըջիւրք եւ գետք ի հուր բորբոքեսցին համանգամայն :
Յայնժամ տըխուր փող ի բարձանց տիեզերաց անդ գոչեսցէ ,
Օ աղէտալին ողբացեալ գործս եւ ըզվաստակս ամենազան :
Իս ցուցցէ երկիր զանդրնդայինն բացեալ վիհ :
Լսլ յանդիման լիցին Տեառն Թագաւորք միանգամայն :
Իս հոսեսցէ գետ հըրոյ եւ ծըծըմբոյ ի յերկնից ,
Իս լիցի անդ նըշան մեծ այսպէս համայն մահկանացուաց :
Փայտն ' հաւատացեալս լիցի եղջիւր ցանկալի ,
Կեանք արանց բարեպաշտից եւ աշխարհի գայթակղութիւն :
Ի ուսաւորեալ զորս հաւատան ջըրովք յաղբիւրս երկոտասան :
Իս հովուիչ գաւազան անդ տիրեսցէ երկաթի :
Սա որ այժմ նախագրեալ ի ստիքածայրս , Լստուած մեր ,
Չարչարեալ վասըն մեր փրկիչ անմահ Թագաւոր :

Օ ասոնք առաջ բերելէն վերջը Կոս-
տանդիանոս՝ երանի կու տայ անոր զորն
որ Վրիստոս ընտրեց իրեն իբրեւ մար-
գարէուհի , և “ Թէպէտ կան շատերը ,
կ'ըսէ , որ աս բանիս չեն հաւտար , ա-
նանկ մը կարծելով որ տաղաչափութե
տեղեկութիւն ունեցող քրիստոնէիցմէ
մէկը չ'ընած՝ ըլլայ զասոնք Սիբիլեան
գուշակութիւնք կոչելով , բայց յայտնա-
պէս կ'երենայ ասոնց ճշմարտութիւնը

անոնցմէ՝ որոնք հսկողութեամբ ստու-
գեցին ասոնց ժամանակը , անանկ որ և
ոչ Թէթև տարակոյս մը կրնայ վերջը-
նել Թէ Վրիստոսի գալստենէն վերջը
եղած ըլլան աս քերթուածներս և սը-
տութեամբ իբրեւ հին հռչակուած :
Ս ասն զի ամէնքն ալ կը խոստովանին
Թէ Կիկերոն աս քերթուածներս լա-
տիներէն Թարգմաններ է , և աս Թարգ-
մանութիւնս յափշտակեց Լստոնինոս ,

որուն՝ 56 տարի թագաւորեւէն վերջը՝
յաջորդեց Տիբերիոս, և ասոր միջոցը
եղաւ Վրիստոսի աշխարհ գալը և մեր
կրօնքին խորհուրդները զօրացընելը ,
Եւ ինքն Աոստանդիանոս Վրիստոսի
վրայ սեպելով բոլորովին Ա իրգիլիոսի

հետեւեալ տողերը, ինչպէս ուրիշ շատ
բանասերներու ալ կարծիքն է, իբրեւ
վկայութիւն յառաջ կը բերէ. և իրաւ-
ցընէ ուրիշ ինչ բանի վրայ կրնանք մեկ
նել այս հրաշալի հեթանոս մատենա-
գրին խօսքերը որ կ'ըսէ .

Աիկեւեանք առէք Սուսայք, վրսեմագոյնս ինչ երգեսցուք . . .

Եւ հաս կուսականին այժմիկ տաղի վերջինն այն դար ,

Պարագայց յաւիտենից կարգ մեծ ըսկիզբն առցէ անդրէն .

Վարձ այժմիկ առնէ կոյսն, եւ դարձ կրողնեանն արքայութիւն .

Նոր արդ աւասիկ իջանէ զարմ յերկնից բարձանց ,

Սերձ եւեթ եթէ կացցես ըզգաստասէրդ Առկինա

Սանկաննն նորածնի, իւ երկաթեայն առեալ դադար

Ընդ հանուր տիեզերս յարիցէ դարն ոսկեղինիկ . . .

Կենակից լիցի նա դից, եւ ըզգիւցազն որեարն ընդ դիս

Տեսցէ պարակից, եւ տեսցի ինքն իսկ ի նոցունց ,

Տիրեալ յոլորտ անդորրաւէտ հայրենական արիութեամբ :

Եւ քեզ ձօնեակ ածցէ երկիր ինքնայորդոր, ո՛վ մանկիկ . . .

Սիւս եւս յայնժամ կացցէ Տիփիս, միւս զայրընտիրսն զիւցազունս

Բարձեալ բերցէ արգոնաւ . . .

Ի բարձր ի բարձս ամբարձիր, վաղ իսկ հասցէ քեզ ժամանակ ,

Ո՛վ սիրասուն գիցըն զաւակ եւ սանրդ վեհ որմըզական .

Տես զօլորտըս խորանարդ բեռամբըն թինդս առեալ առ խինդ ,

Օ երկիր եւ զերկին անդընդախոր եւ զծով ծաւալ ,

Տես իբր ընդ գալուստ յաւիտենին հըրձուին հանուրք :

Յանկարծ, եթէ երկար մնայցէ կենաց մասն ինձ վերջին ,

Եւ զքո ոգել արութիւնս որչափ ինչ բաւ է ինձ ոգի ,

Աւ թրակացւոյն Արիէի տեղի տաղիւք տաց , ոչ Ա ինեայ :

ՎԻՐԳԻԼԻՈՍ, Պոլլիոն :

Յայտնի է նաեւ ինչ որ իմաստասէր
ու քաջայաղթ սրբուհւոյն Վեքտաուի-
նեայ վարքին մէջ գրուած է, որ Յու-
նաց իմաստասերներուն հետ վիճելու
ժամանակ անոնց առջևը դրաւ Սիբիլ
լայից վկայութիւնները, որոնց մէջէն
ան կտորը միայն դնենք՝ որ մեր երկա-
թագիր ճառընտիրներուն մէջն ալ կը
գտնուի, այսպէս . “ Իսկ երանելին
Վեքտաուինէ տեսեալ զնոսա ի տարա-
կուսի լեալ՝ պատմեաց նոցա զմարգա-
րէութիւն հեթանոս իմաստասիրաց՝
որ յառաջ քան զգալուստն Վրիստոսի
էին, զԱ իրգիղիոսն որ ասէ “ Յերից
միութեանն մինն ի մարմնի տեսաւորի,
յերից աներեւութից ոչ պակասի ,”
Եւ Սիբիլա թագուհին գրեաց ի գիրս

իւր ի շարս պատճենի վասն խաչին .

“ Ո՛վ երիցս երանեալ փայտ յորում
աստուածայինն տարածանի ,” . և յետ
սակաւուց գրէ . “ Վահանայքն զըր-
ժիշկն իւրեան ի փայտի խաչեսցեն և
ոչ կարասցեն յաղթել նմա ,” :

Ի ատին հարց մէջէն ալ Հերոնիմոս
և () գոստինոս և ուրիշները շատ պատ-
ճառներով Սիբիլայից ստոյգ ըլլալը կը
հաստատեն, որոնցմէ առջինը խորհրդ-
դածելով անկարելի կը սեպէ որ իրենք
այնպէս յայտնի կարենային գուշակել
առանց Բստուծոյ մասնաւոր յայտնու-
թեանը . իսկ Ս . () գոստինոս խիստ
շատ տեղ վկայութիւն բերելով Սիբիլ-
լաներէն հեթանոսաց դէմ, մանաւանդ
Յաղափս Բաղաթին Աստուծոյ գրքին մէջ,

Սիբիրայից պատմութիւնն ընելէն և անոնց գուշակութիւնը՝ ինչ որ առաջ դրինք՝ առաջ բերելէն ետև, այնչափ կը գովէ Նրեարեան Սիբիրան այնպէս ընդդէմ հեթանոսաց կատարեալ աստուածածանութեան թիւ խօսելուն համար՝ որ պէտք է, կ'ըսէ, զինքը ընտրելոյ թուոյն մէջ սեպել:

Սակայն այս ամէնն ալ թողլով, ինչ կը նշանակէ արդեօք Սիբիրոնի ունեցած ան աստիճան վախն ու սրտմտութիւնը, որ ինչպէս առաջ ալ յիշեցինք, Վրիստոսէ խել մը տարի առաջ Սիբիրայից գրքերը կարդալով ու լսելով անոնց ըրած գուշակութիւնները՝ կ'ըսէր. « Իսկ որո՞ւմ հեղինակութեան իցէ ցնորումն այն զոր Եստուածայինդ կոչէք, որպէս զի զոր խմաստունն ոչ տեսանէ, խելայեղն կարող լիցի տեսանել, և որոյ կորուսեալ իցէ զգայութիւնս, խելամուտ աստուածայնոյն լինիցի »: Եւսպէս կը խօսէր Սիբիրոն, վասն զի ամբարտաւանութեամբ լցեալ չէր ուզեր որ Հռովմայ այլազգի թագաւոր մը տիրէ:

Բայց մենք այսչափ օրինակներէ վերջը՝ ահաւասիկ կը կնքենք խօսքերնիս կրկնելով Պաղիոս անուանի քննաբանին հետ՝ թէ Սիբիրայից գրքերը եօթն գիրք բաժնուած ու տպագրուած են, և թէպէտ շատ վէճեր եղան՝ կարծելով որ զասոնք Վրիստոնեայք շինած ըլլան, բայց կ'ըսենք՝ որ եթէ մասամբ ալ այնպէս սեպենք, սակայն Ս. Հարց բերած վկայութիւններուն մէջ ամենևին մասն չունին Վրիստոնեայք:

Գ. Ն.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յորենայի¹ և Որատեայ² բաղդատորիւնը:

Յորենալ քիչ տրամախօսութիւն կը բանեցրնէ, իբրև յաթողոյ մը կը սորվեցրնէ ու կը ճամարտակէ. հռետորաց կերպով ինդիր մը կը պաշտպանէ. մեծ արուեստ մը կը ցուցրնէ, որ կը չլացրնէ զմարդ և միանգամայն կը յոգնեցրնէ. դիւցազներգական պերճութիւն մը կու տայ ամենէն հասարակ նիւթերուն. և այնպէս ծանր է, ինչուան իւր անհամեստ խօսակցութեանցը մէջ ալ, որ յայտնի կ'երևայ որ ոչ եթէ այսպիսի յիշատակներով կը զուարճանայ, հապա իբրև նոր կերպով իւր արուեստը ցուցրնելու համար կը գործածէ: Իր բանաստեղծական գիւտը քիչ է, և ասոր վրայ անփոյթ է, բաւական է որ իւր բռնած նիւթն երկիւղածութեամբ առաջ տանի՝ առանց յաջ և յահեակ խոտորելու, ինչպէս կ'ընէ Որատիոս որ ճամբայ կ'ելլէ առանց բան մը որոշած ըլլալու, և ըստ քմաց նիւթէ նիւթ կը ցատքէ, անանկ որ անկարելի է իւր երգիծաբանութեանց ճակատն որոշ անուն մը դնելը, ուր որ Յորենալի ամենայն երգիծաբանութիւնները մէկ խօսքով կրնաս համառօտել: Բաց ասկէ՝ Յորենալ միշտ բարկացկոտ է. իր կատակաբանութիւնքը, որ շատ անգամ ամենաճարտար են, բնաւ չեն զուարճացրնէր: Երեւնայ որ եթէ վարժոյց գացած չըլլար, կրնար զուարթ գիմք ծիծաղիլ, որովհետև անտարբեր է ասոր վրայ. բայց իր ծիծաղը այնպիսի անձի ծիծաղ մըն է, որ ինքզինքը պարտաւորեալ կը համարի այն աստիճանի ծանրութեան, որ նոյն իսկ ծիծաղելու միջոցն ալ կ'ուզէ նոյնը պահել. և

¹ Յորենալ լատին երգիծաբան բանաստեղծը Քրիստոսի 42 թուականին ծնաւ, և ութսունու երկու տարուան հասակի մէջ մեռաւ:

² Որատիոս հռչակաւոր բանաստեղծը Քրիստոսէ 66 տարի առաջ ծնած և 9 տարի առաջ մեռած է: